

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՈՒՄ
<<ՏԱՐՎԱ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՑԻՉ>>, <<ՏԱՐՎԱ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՏՆՕՐԵՆ>>
ԵՎ <<ՏԱՐՎԱ ԼԱՎԱԳՈՒՅՆ ԴԱՍՏԻԱՐԱԿ>> ՄՐՑՈՒՅԹՆԵՐԸ
ԿԱՏՄԱԿԵՐՊԵԼՈՒ ԵՎ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Կրթության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի, <<Հանրակրթության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 31-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2007 թվականի մարտի 23-ի N 185-Ա/Ք հրամանով հաստատված <<Տարվա լավագույն ուսուցիչ>>, <<Տարվա լավագույն տնօրեն>> և <<Տարվա լավագույն դաստիարակ>> հանրապետական մրցույթի անցկացման կարգ>>-ի, 2011 թվականի փետրվարի 15-ի N 106-Ա/Ք հրամանով հաստատված <<Հայոց լեզու և գրականություն>>, <<Հայոց պատմություն>>, <<Հայոց եկեղեցու պատմություն>>, բնագիտական (<<Ֆիզիկա>>, <<Քիմիա>>, <<Կենսաբանություն>>) առարկաների և դասվարի՝ <<Լավագույն ուսուցիչ>> հանրապետական մրցույթի անցկացման կարգ>>-ի պահանջները

Կարգադրում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզում <<Հայոց լեզու և գրականություն>>, <<Հայոց պատմություն>>, <<Հայոց եկեղեցու պատմություն>>, բնագիտական (<<Ֆիզիկա>>, <<Քիմիա>>, <<Կենսաբանություն>>) առարկաների և դասվարի՝ <<Լավագույն ուսուցիչ>> մրցույթները կազմակերպելու և անցկացնելու համար ստեղծել մարզային հանձնաժողով հետևյալ կազմով՝

Հակոբյան Ա. - մարզպետի տեղակալ (նախագահ)

Ստեփանյան Ռ.- մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետի տեղակալ

Գաբրիելյան Ս. - ԿԱԻ Գեղարքունիքի մասնաճյուղի աշխատակից

Խանամիրյան Գ. - Գավառի N 3 հիմնական դպրոցի պատմության ուսուցիչ

Գաբրիելյան Հ. - Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի քրիստոնեական դաստիարակության կենտրոնի աշխատակից

Պետրոսյան Ա. - Գեղիովիտի N 2 միջնակարգ դպրոցի քիմիայի ուսուցիչ

Նավասարդյան Խ.- Սևանի N 3 հիմնական դպրոցի ֆիզիկայի ուսուցիչ

Հայրապետյան Գ. - ԿԱԻ Գեղարքունիքի մասնաճյուղի մասնագետ

2. <<Տարվա լավագույն ուսուցիչ>>, <<Տարվա լավագույն տնօրեն>> և <<Տարվա լավագույն դաստիարակ>> մրցույթները կազմակերպելու և անցկացնելու համար ստեղծել մարզային հանձնաժողով հետևյալ կազմով՝

Հակոբյան Ա. - մարզպետի տեղակալ (նախագահ)

Շահբազյան Հ. - մարզպետարանի աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի վարիչ

Բիծյան Մ. - մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի

վարչության կրթության բաժնի կրտսեր մասնագետ
Հակոբյան Ա. - Մ. Մասրիկի միջնակարգ դպրոցի տնօրեն
Ղարիբյան Ա. - Սևանի N 3 մսուր-մանկապարտեզի տնօրեն
Գևորգյան Վ. - Մարտունու N 1 միջնակարգ դպրոցի մաթեմատիկայի ուսուցիչ

3. Հանձնաժողովներին՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2007 թվականի մարտի 23-ի N 185-Ա/Ք հրամանով հաստատված «Տարվա լավագույն ուսուցիչ», «Տարվա լավագույն տնօրեն» և «Տարվա լավագույն դաստիարակ» հանրապետական մրցույթի անցկացման կարգ»-ի, 2011 թվականի փետրվարի 15-ի N 106-Ա/Ք հրամանով հաստատված «Հայոց լեզու և գրականություն», «Հայոց պատմություն», «Հայոց եկեղեցու պատմություն», բնագիտական («Ֆիզիկա», «Քիմիա», «Կենսաբանություն») առարկաների և դասվարի՝ «Լավագույն ուսուցիչ» հանրապետական մրցույթի անցկացման կարգ»-ի պահանջներին՝ 2012 թվականի ապրիլի 29-ին կազմակերպել և անցկացնել մրցույթների մարզային փուլը՝ համապատասխանաբար ժամը 11.00-ին և 14⁰⁰-ին մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչությունում:

4. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝

Ռ. ԳՐԻԳՈՐՅԱՆ